Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐ ըստ BVFG

(միայն Գերմանիայի համար)

Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես պայմանավորվածություն ձեռք բերել: Պայմանավորվածություն կարող եք ձեռք բերել միայն առցանց (օնլայն):

Օնլայն-հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքէջի միջոցով.

www.eriwan.diplo.de

Փաստաթղթերն ընդունելուց հետո գործերի քննության և մշակման համար պահանջվում է առնվազն **1-2 շաբաթ:** Առանձին դեպքերում կարող է տևել ավելի երկար:

Դիմումի փաստաթղթերը

Դիմում հանձնելիս անհրաժեշտ է **անձամբ** ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել հյուպատոսական բաժնի պատուհանի մոտ՝ նշված հերթականությամբ **դասավորած:** Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) անհրաժեշտ է ներկայացնել **A4 ֆորմատի թղթի վրա:** Խնդրում ենք թղթերը **չկարել, չամրացնել:** Դեսպանությանը հասցեագրված ֆաքսերը կամ գրությունները չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին: Ոչ լիարժեք դիմումներ չեն ընդունվում:

Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար:

Դեսպանությունը նշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82–ի դիմում ներկայացնողը պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, որևէ փաստաթղթի բացակայության դեպքում դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- գերմաներենով կամ անգլերենով, **լիարժեք լրացրած** դիմում-հարցաթերթիկ: Այն կարող եք ներբեռնել մեր ինտերնետային էջից՝ https://videx-national.diplo.de
- 2 նոր, բիոմետրիկ լուսանկար, մեկը խնդրում ենք սոսնձել դիմում-հարցաթերթիկին
- գործող ճամփորդական անձնագիր՝ ելքի կնիքով, վավերական ամենաքիչը 6 ամիս: (Անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ վավերականության ժամկետը չպետք է գերազանցի 10 տարին)
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, այցագիր կամ որևէ այլ նշում
- ստորագրված հայտարարություն կեղծ տվյալների վերաբերյալ (տե՛ս դիմում- հարցաթերթիկը)
- դաշնային վարչական մարմնի կողմից ընդունման թույլտվության/ներգրավման որոշման (Aufnahmezusage/Einbeziehungsbescheid) օրիգինալը և մեկ պատճեն
- անհրաժեշտության դեպքում՝ գերմաներենի A1 կամ B1 մակարդակի իմացության մասին ապացույց և մեկ պատճեն:

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Հասցեն՝
Չարենցի 29
0025 Երևան, ՀՀ

Հեռախոսային խորհրդատվության
ժամերը տեղադրված են մեր կայքում.
https://eriwan.diplo.de/

Էլ. փոստի հասցե.
national@eriw.diplo.de

Կարևոր ցուցումներ

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ **դեսպանության շենքում հյուպատոսական բաժնի պատուհանի մոտ** գանձվող այցագրի վճարից բացի այցագրի համար դիմելիս այլ վճար նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** որևէ տուրիստական ընկերության հետ: **Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող ծառայություններ մատուցող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, չեն համապատասխանում իրականությանը:**

Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշում է կայացնում բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում փող մի՛ վճարեք:**

Այցագրի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ Դուք կարող եք անվճար ստանալ դեսպանության **հյուպատոսական բաժնի աշխատակիցներից:** Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն:

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Հասցեն՝
Չարենցի 29
0025 Երևան, ՀՀ

Հեռախոսային խորհրդատվության
ժամերը տեղադրված են մեր կայքում.
https://eriwan.diplo.de/

Էլ. փոստի հասցե.
national@eriw.diplo.de